ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐԱ ՖԻԴԱՆՅԱՆԻՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳԾՈՎ ՓՈՐՁԱԳԵՏ
ԱՐՇԱԿ ԹՈՎՄԱՍՅԱՆԻՑ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում, 2023 թվականի դեկտեմբերի 28-ից 2024 թվականի մարտի 28-ը, իրականացրել եմ ներքոգրյալ աշխատանքները.

1. իրավական փորձաքննության եմ ենթարկել Իրավաբանական վարչության կողմից ներկայացված ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների նախագծեր՝ դրանց վերաբերյալ ներկայացնելով կարծիքներ, այդ թվում՝

1) «Ֆինանսապես կայուն անձ համարվելու չափանիշները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

2. Մշակել եմ ՀՀ կառավարության որոշումների նախագծեր, այդ թվում՝

1) Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտրի, պահեստավորման կամ տեղափոխման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.

2) Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների կիրառման կամ պայթեցման աշխատանքների կատարման լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.

3) Հրագործական արտադրատեսակների կիրառման (շահագործման) (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների I և II դասերի) լիցենզավորման կարգն ու լիցենզիայի ձևերը հաստատելու մասին.